3.

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ/ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Տարածքի մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Տարածքի մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Համայնքային սեփականություն համարվող հողերից			
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	**27.83**		
			Բնակավայրի, որից՝	**27.83**
	Վարելահող Արոտ √ Այլ հողատեսքեր	25.54 0.04 2.25	Բնակելի կառուցապատման Հասարակական կառուցապատման Ընդհանուր օգտագործման Բնակավայրի այլ հողեր	22.53 0.75 4.32 0.23
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	**1.0**		
			Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմ. ենթակառ. Օբյ. Հողեր, որից՝	**1.0**
	Այլ հողատեսքեր	1.0	Կոմ. Ենթ. Օբյ. Հողեր (Աղբավայր)	1.0
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	**1.05**		
			Հատուկ պահպ. Տարածքների հողեր, որից	**1.05**
	Այլ հողատեսքեր	1.05	Պատմամշակ. Հողեր (Գերեզմանոց)	1.05
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, որից՝	**0.75**		
			Բնակավայրի, որից՝	**0.75**
	գյուղ. Արտադրական	0.75	Բնակելի կառուցապատման Հասարակական կառուցապատման Ընդհանուր օգտագործման	0.47 0.14 0.14
	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի կոմ. ենթակառ. Օբյ. Հողեր, որից՝	**1.39**		
			Բնակավայրի հողեր, որից՝	**1.39**
	Տրանսպորտի հողեր	1.39	Բնակավայրի այլ հողեր.	1.39

4.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 14-րդ և 30 –րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

1. Կ. Արարատյան
2. Գ. Փալիկյան
3. Հ. Հակոբյան
4. Ի. Սահակյան
5. Ա. Հակոբյան
6. Յ. Մկրտչյան

Քաղցրաշեն համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

11.08.2015թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 27-րդ մասով, ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14,3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտենբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը՝ (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովմանպայմանով և հավելվածի «Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների» գծագրին և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.